I

Doi:10.54503/0135-0536-2022.1-3

ՊՈՂՈՍ ՆՈՒԲԱՐԻ
ԾՆՆԴՅԱՆ 170-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ԳՈՐԾԻՉԸ ԵՎ ԲԱՐԵՐԱՐԸ. ՊՈՂՈՍ ՆՈՒԲԱՐ ՓԱՇԱ*

ՄԻՔԱՅԵԼ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Բանալի բառեր՝ Պողոս Նուբար փաշա, Գևորգ Հինդերորդ, Կ. Պոլսի պատրիարքարան, Հայ ազգային պատվիրակություն, Հայկական բարենորոգումներ, ռուս-թուրքական համաձայնագիր, Սևրի պայմանագիր, ՀԲԸՄ, մեծ բարերար, ազգային գործիչ, Մարի Նուբար:

Նախաբան

XX դարասկզբի հայ ազգային, հասարակական և քաղաքական գործիչների անգուգական փաղանգում Պողոս Նուբար փաշան շահեկանորեն առանձնանում է իր ազգանպաստ գործունեությամբ, որի համար ժամանակակիցների շրջանում վաստակեց բարձր հեղինակություն, իսկ սերունդների հիշողության մեջ մնաց իբրև մեծ բարերար և անսահման հայրենասեր: Եվրոպական հասարակական, քաղաքական և կառավարող շրջանների հետ ունեցած անձնական կապերը և ծանոթությունները, հեղինակավոր դիրքն ու նյութական հարստությունը ծառայեցրեց Հայկական հարցի լուծմանը, որի համար աշխատեց օրնիբուն՝ չխնայելով ո՛չ ժամանակը և ո՛չ առողջությունը: Նրա հիմնադրած «Հայ բարեգործական ընդհանուր միությունը» (ՀԲՄԸ) առ այսօր շարունակում է հաջողությամբ իրագործել աշխարհասփյուռ հայ կարիքավորներին օգնելու և Հայաստանի Հանրապետությունը շենացնելու բազմաթիվ ու բազմապիսի ծրագրեր:

Կրթությունը և աշխատանքային գործունեությունը

Պողոս Նուբարը ծնվել է 1851 թ. օգոստոսի 2-ին Կ. Պոլսում: Նուբարյան գերդաստանը սերում էր Սյունիքից: Նրանք ակտիվորեն մասնակցել էին XVIII դարի 20-ական թվականների Սյունիքի ազատագրական պայքարին, եղել էին Դավիթ Բեկի զինակիցներից[1]: Ազատագրական պայքարի անկումից հետո՝ 1732 թ., Նուբարյաններն արտագաղթել են ու հաստատվել Զմյուռնիայում (Իզմիր), ուր ծավալել են առևտրատնտեսական գործունեություն: Երվանդ Օտյանի վկայությամբ՝ «Պողոս փաշայի հայրը՝ մեծն Նուբար ծնած է Իզմիր, իր հայրն էր Մկրտիչ Նուբարյան, որ անցյալ դարու սկիզբները

---

* Ներկայացվել է 06. XII. 2021 թ., գրախոսվել է 28. XII. 2021 թ., ընդունվել է տպագրության 07. III. 2022 թ.:

[1] Տե՛ս «Տարազ» (Թիֆլիս), հունվար 1913, թ. 1, 5:

կապրեր ...»[2]: Նուբար փաշան Եգիպտոսի պետական ու քաղաքական նշանավոր գործիչներից էր. 1875–1876 թթ. եղել էր արտաքին գործերի և առևտրի, իսկ հետո՝ 1878–1879 թթ., 1884–1888 թթ. և 1894–1895 թթ., Եգիպտոսի վարչապետ:

Պ. Նուբարը սկզբնական կրթությունը ստացել է Եգիպտոսում, իսկ միջնակարգը՝ Շվեյցարիայում ու Ֆրանսիայում: Ավարտելով Փարիզի "Ecole Centrale" *բարձրագույն դպրոցը՝ ստացել է ճարտարագետ-երկրաչափի մասնագիտություն և աշխատանքի անցել Ֆրանսիայի հանքերում ու երկաթուղային ցանցում: Վերադառնալով Եգիպտոս՝ Պ. Նուբարը չի ցանկանում հետևել հորը, ով արդեն պետական ու քաղաքական նշանավոր գործիչ էր, սկսում է զբաղվել տնտեսական գործունեությամբ: 1878–1879 թթ. և 1891–1898 թթ. եղել է Եգիպտոսի պետական երկաթուղային ցանցի գլխավոր տնօրեն: Նրա հեղինակությամբ կազմվել ու հաջողությամբ իրագործվել է Եգիպտոսի երկաթուղիների վերակառուցման և Սուդանի ջրամբարտակի ջրաբաշխական համակարգի բարեփոխման դժվարին աշխատանքը: 1880–1891 թթ. եղել է Բեհերա նահանգի անգլիական երկրագործական ընկերության տնօրենը և ծանրակշիռ ներդրում ունեցել նահանգում ջրհան կայաններ կառուցելու աշխատանքներում: Այդ տարիներին նա հիմնադրել է Եգիպտոսի հանրակառքերի (տրամվայների) վարչությունը, ինչպես նաև գահաժառանգ, հետո նաև սուլթան Հուսեյին Առաջինի աջակցությամբ հիմնել է Եգիպտոսի երկրագործական ընկերությունը: 1900 թ. Պ. Նուբարը նոր տեսակի ինքնաշարժ արոր (տրակտոր) ստեղծելու համար, որը ցուցադրվել է Փարիզի գյուղատնտեսական միջազգային ցուցահանդեսի թուրքական բաժնում, պարգևատրվել է ոսկե մեդալով և Պատվո լեգեոնի ասպետության խաչով: 1906 թ. Միլանի ցուցահանդեսում նմանատիպ հաջողությունից հետո ստացել է նաև Պատվո լեգեոնի սպայի աստիճան: Գյուղատնտեսության բնագավառում տարբեր գյուտերի համար Ֆրանսիայի երկրագործական ընկերությունը Պ. Նուբարին պարգևատրել է նաև ոսկե պատվավոր* "Oliver de Servs" *շքանշանով: Որպես պետական պաշտոնյա, գործարար և գյուտարար՝ նա բարձր է գնահատվել նաև եգիպտական կառավարության կողմից ու պարգևատրվել «Մեջիդիե», «Օսմանիե» և «Նեղոսի» մեդալներով[3]:*

Թեև Պ. Նուբարը չհետևեց հորը և քաղաքական գործունեություն չծավալեց, այդուհանդերձ, կարճ ժամանակում հասավ երևելի դիրքի ու հարգանքի: Նա մտերիմ հարաբերություններ հաստատեց Եվրոպայի դիվանագիտական և քաղաքական շրջանակների հետ: Պաշտոնական կամ մասնավոր այցով Եգիպտոս ժամանած գրեթե բոլոր քաղաքական գործիչներն ու մտավորականները հյուրընկալվել և հյուրասիրվել են նրա տանը:

Պ. Նուբարը կարևոր դեր էր խաղում ոչ միայն Եգիպտոսի պետական ու տնտեսական կյանքում, այլ նաև տեղի հայ համայնքի ազգային կյանքում: Լինելով Ալեքսանդրիայի (1888–1902 թթ.) և Կահիրեի (1905–1914 թթ.) հայոց թեմական ժողովի ատենապետ՝ նա բացառիկ դերակատարում ունեցավ եգիպտահայերի համայնքային հիմնարկությունների դրամական եկամուտները բազմապատկելու գործում: Հատկապես շոշափելի էր աբդուլհամիդյան

---

[2] *Օ տ ե ա ն. 1913, 4:*

[3] *Տե՛ս Բ ո յ ա ջ յ ա ն. 2010, 30:*

ջարդերից մազապուրծ Եգիպտոս հասած հայ փախստականներին ցուցաբերած աջակցությունը:

Պ. Նուբար փաշան ամուսնացել է 1880 թ. Տատյան նշանավոր գերդաստանից Հովհաննես բեյի դուստր Մարիի հետ: Ամուսնությունը նրա կյանքում բախտորոշ դեր խաղաց, քանի որ հիմնադրվեց հայկական ավանդական ընտանիք: Նրանք ունեցան չորս որդի և մեկ դուստր: Պ. Նուբարը մի առանձին սիրով կապվեց Մարիի հետ, նրա հորդորով ու աջակցությամբ էլ հետագայում սկսեց զբաղվել ազգային գործերով:

Ամենակարևոր դերը, որ Պ. Նուբարը խաղաց հայոց ազգային կյանքում, 1906 թ. ապրիլին Կահիրեում ՀԲԸՄ-ի հիմնումն էր: Միության ծրագրային դրույթները կրում էին 1860 թ. Փարիզում Ադոլֆ Կրեմյեի հիմնադրած հրեական “Alliance Israelite Universelle” *կազմակերպության ազդեցությունը: Միության նպատակն էր՝ նյութապես օգնել աշխարհասփյուռ կարիքավոր հայերին, նպաստել հայ երիտասարդության կրթադաստիարակչական զարգացմանը, աջակցել արտերկրում հայապահպանության ձեռնարկներին, զորավիգ լինել հայրենիքի տնտեսական բարգավաճմանը և այլն: Այն ուներ բացառապես մարդասիրական բնույթ և մերժում էր առևտրատնտեսական ու քաղաքական գործունեության ծավալումը, որի դրամական միջոցները գոյանում էին անդամավճարներից, նվիրատվություններից և հանգանակություններից: Միությունը ղեկավարում էր սկզբում Կահիրեում, իսկ 1922 թ.՝ Փարիզում տեղակայված կենտրոնական վարչությունը, որի նախագահը Պ. Նուբար փաշան էր: Մինչ Առաջին աշխարհամարտը ՀԲԸՄ-ն նրա ջանքերով հաջողությամբ իրագործում էր իր առջև դրված խնդիրները: Միությունն ուներ 8500 անդամ՝ 150 մասնաճյուղով, որից միայն 70-ը՝ Օսմանյան կայսրությունում*[4]*:*

Հայ ազգային պատվիրակության նախագահի գործունեությունը (1912–1914 թթ.)

Երիտթուրքերի քաղաքականության հետևանքով զրկանքների դատապարտված արևմտահայության կացությունը, ինչպես նաև իտալա-թուրքական, ապա նաև Բալկանյան Առաջին պատերազմում Օսմանյան կայսրության ջախջախիչ պարտությունները 1912 թ. աշնանը պատճառ դարձան Հայկական հարցի վերաբացման համար: Հոկտեմբերի 2-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Հինգերորդ Սուրենյանցը Կ. Պոլսի պատրիարք Հովհաննես Արշարունու խնդրագրերի հիման վրա հատուկ աղերսագրով Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի միջոցով դիմեց ռուսաց ցարին՝ խնդրելով «առնել յուր հովանավորության տակ Տաճկաստանում ապրող բազմաչարչար հայ ազգը»[5]*: Ռուսական կառավարող շրջանները Պետերբուրգում ջերմ ընդունելության արժանացրին կաթողիկոսական հատուկ բանագնաց Մովսես եպիսկոպոս Տեր-Մովսեսյանին, ում արտգործնախարար Սերգեյ Սազոնովը խորհուրդ տվեց Եվրոպայի հասարակական, քաղաքական և դիվանագիտական շրջաններում հայանպաստ տրամադրություններ ձևավորելու նպատակով ստեղծել հատուկ պատվիրակություն*[6]*: Գևորգ Հինգերորդը,*

---

[4] *Տե՛ս Զորմիրսեան. 1975, 117:*

[5] *Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 57, ց. 5, գ. 26, թ. 6, ՊԲՀ, 1993, № 1–2, 169:*

[6] *Տե՛ս Մ. Մաշտոցի անվան մատենադարան, Կաթ. դիվան, ց. 20, թղթ. 238, վավ. 164, ՊԲՀ, 1993, № 1–2, 170:*

համոզված, որ ռուսաց արտգործնախարարի խորհուրդը լիովին համապատասխանում է կաթողիկոսական և պատրիարքական դիվանագիտության տրամաբանությանը, ձեռնամուխ եղավ ազգային պատվիրակություն ստեղծելու աշխատանքներին: Սակայն պարզվեց՝ կան որոշակի դժվարություններ, քանի որ անհրաժեշտ էր գտնել այնպիսի թեկնածու, ով կապեր կունենար եվրոպական պետական ու հասարակական-քաղաքական շրջանների հետ, նյութապես ապահովված և անկուսակցական լինելով՝ անվիճելի հեղինակություն վայելեր: Մի քանի թեկնածություններ քննարկելուց հետո՝ 1912 թ. նոյեմբերի 10-ին, Գևորգ Հինգերորդը 1482 թվակիր կոնդակով դիմեց Փարիզում գտնվող Պ. Նուբար փաշային՝ խնդրելով նրան ստանձնել հայոց ներկայացուցչի պաշտոնը և «յանձն առնուլ երթալ ի Վեհաժողով (կոնֆերանս) եւ առաջի առնել պատգամաւորաց Եւրոպական Պետութեանց զխնդիր Հայոց և զտեղեկագիր մեր, հայցելով զմիջնորդութիւն նոցա առ ողբալի կացութիւն հայ ժողովրդեան Տաճկաստանի»[7]:

Պ. Նուբար փաշան կաթողիկոսական կոնդակը ստացավ դեկտեմբերի 2-ին: Նա, առանց երկմտելու, ընդունեց Ամենայն Հայոց հայրապետի խնդրանքը. հետաձգեց Եգիպտոս վերադառնալու ծրագրերը, և հաստատապես կարելի է պնդել, որ հենց այդ պահից նրա անձնական կյանքն ու գործերը մղվեցին երկրորդական ասպարեզ:

Հայ ազգային պատվիրակության նախագահ նշանակվելը Պ. Նուբարին միանգամից հռչակավոր դարձրեց: Հայ հասարակության բոլոր հատվածների և շերտերի հայացքն ուղղվեց դեպի Պ. Նուբարը, ում երակներում, շատերի համոզմամբ, հայ ազատատենչ մելիքների արյունն էր հոսում: Հայկական պարբերական մամուլը հեղեղված էր նրա անձնական կարողությունների, հմտությունների և հնարավորությունների մասին հիացական հոդվածներով: Ահավասիկ, օրինակ, «Մշակ» թերթի կարծիքը. «Կաթողիկոսը՝ խիստ նպատակայարմար ընտրութիւն մը ըրած էր Պողոս Նուբարի յանձնելով եւրոպական պետութեանց մոտ դիմում կատարելու պաշտօնը: Պողոս փաշան ունի ընդարձակ հարաբերութիւններ և ծանոթութիւններ դիվանագիտական աշխարհին մէջ, ունի անսահման ծախսելու դյուրութիւն – ինչ որ մեծ ջիղ մըն է այս տեսակ գործերու մէջ և հմտութիւն դիվանագիտական ասպարեզին մէջ»[8]:

Իսկ թե ինչպես ինքը՝ Պ. Նուբարը, ընդունեց ընտրությունը, ներկայացնում է հայ անվանի գրող, բանաստեղծ և հասարակական գործիչ Արշակ Զոպանյանը, ով ներկա է եղել կաթողիկոսական կոնդակի հանձնմանը. «Կորովի, ձեռներեց և գործունեա մարդ, արդար ու գեղեցիկ փառասիրութիւն ուներ ան իր մեծանուն հոր, որուն համար պաշտամունք մը կը տածեր արժանավոր զավակ մ'ըլլալու, իր իսկ գործերով պատմութեան մէջ արձանագրվող անուն մը ձգելու, և ահա պատեհութիւնն իրեն կը տրվեր իր ցեղին դատին համար իսկ աշխատելով՝ ծառայելու, օգտակար հանդիսանալու, յանրօգուտ դեր կատարելու իր ներքին բուռն ու տիրական ըղձանքին գոհացում տալու և նույն ատեն իր ազգին պատմական անձնավորութեանց շարքին մէջ իր անձնավորութեան ու ճիգերուն շնորհիվ իր իրավունքն եղող տեղը գրավելու»[9]:

---

[7] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 27, թ. 1–2:*
[8] *«Մշակ» (Թիֆլիս), 04. I. 1913:*
[9] *«Անահիտ» (Փարիզ), 1930, թիվ 2, մայիս–հունիս, 120:*

Նոյեմբերի 10-ի կոնդակով Հայ ազգային պատվիրակությանը տրվել էին բավականաչափ լիազորություններ, որոնք, սակայն, շուտով սահմանափակվեցին: Արդեն 1913 թ. հունվարի 5-ին Պ. Նուբարին գրած նամակում կաթողիկոսը պահանջում էր նախ՝ բացարձակապես ոչ մի հավատ չընծայել թուրքական կառավարությանը և երկրորդ՝ ամենուր սերտ կապեր հաստատել ռուսաց դեսպանների հետ[10]: Համանման պահանջ առաջադրեց նաև պատրիարք Հովհ. Արշարունին, ով մարտի 30-ին Պ. Նուբարին ուղղված նամակում գրում էր՝ Հայկական հարցի բարենպաստ լուծման նպատակով «միշտ խորհրդակցաբար հարկ է գործել ռուս կառավարության ներկայացուցիչներուն հետ»[11]: Ե՛վ կաթողիկոսը, և՛ պատրիարքը Պ. Նուբարին խորհուրդ էին տալիս կենտրոնացնել ու համակարգել Եվրոպայի հայազգի բարձրաստիճան բոլոր պաշտոնյաների, գիտության և մշակույթի գործիչների ջանքերը, օգտագործել նրանց ծանոթություններն ու կապերն ազգային պատվիրակությանն օժանդակելու համար:

Երբ Վորոնցով-Դաշկովի միջոցով Գևորգ Հինգերորդ կաթողիկոսը տեղեկացավ, որ ռուսական կառավարությունը մտադիր չէ Հայկական հարցն արծարծել Լոնդոնի հաշտության բանակցություններում, հունվարի 4-ին Պ. Նուբարին հրահանգեց՝ «չդիմել Լոնդոնի դեսպանախորհրդին և առ այժմ գործունեությունը սահմանափակել եւրոպական պետությանց կառավարող և ազդեցիկ շրջանների կարծիքները և տրամադրությունները նախապատրաստելով»[12]: Պ. Նուբարը, համոզված, որ Հայկական հարցի լուծումը հնարավոր է միայն Ռուսաստանի օգնությամբ, ստիպված էր տեղի տալ: Փարիզում ռուսական դեսպան Ալեքսանդր Իզվոլսկու հետ հանդիպման ժամանակ նա հայտարարեց, որ Հայ ազգային պատվիրակությունը, չցանկանալով ձեռնարկել ռուսական կառավարության հետ չհամաձայնեցված քայլ, ստիպված է հրաժարվել Լոնդոն գնալու մտադրությունից[13]:

Պ. Նուբարը հարկադրված էր առայժմ բավարարվել միայն Եվրոպայի հայկական կոմիտեների ու մամուլի միջոցով հայասիրական տրամադրությունների քարոզչությամբ: Կ. Պոլսի ռուսաց դեսպան Միխայիլ Նիկոլաևիչ Գիրսը պատրիարքարանի ներկայացուցիչ Գրիգոր Զոհրապին հավաստիացնում էր, որ Հայ ազգային պատվիրակության գործունեությունը շատ օգտակար կարող է լինել դիվանագիտական աշխարհի հետ՝ «կապ պահելով, պրոպագանդա ընելով, հարաբերություններ մշակելով և համակրանք ստեղծելով հայոց դատին համար: «Պիտի գիտնաք,— հավաստիացնում էր դեսպանը,— որ այսպիսի պարագաներու մէջ ժողովրդի համակրանքը և հանրային կարծիքը մեծ դեր կխաղան»»[14]:

Պ. Նուբար փաշան, համոզված, որ հանրային կարծիքը կարող է ազդու լծակ լինել Հայկական հարցում եվրոպական երկրների միակամության հասնելու համար, մեծածավալ աշխատանքներ կատարեց Եվրոպայում գործող հայկական կոմիտեների աշխատանքների աշխուժացման, ինչպես նաև՝ նոր կոմիտեների ու մասնախմբերի ստեղծման գործում: 1913 թ. ընթացքում այդպիսի կոմիտեներ ստեղծվեցին Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիա-

---

[10] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 9:*

[11] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 26, թ. 8–9:*

[12] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 26, թ. 25:*

[13] *Տե՛ս* Архив внешней политики Российской империи *(այսուհետ՝* АВПРИ), ф. «Посольство в Константинополе», оп. 517/2, д. 3727, л. 22.

[14] *Մայր Աթոռ ս. Էջմիածնի ձեռագրատուն, վավ. 288, 28:*

յում, Ռուսաստանում, Ավստրո-Հունգարիայում, Շվեյցարիայում և այլուր: Կոմիտեների ու մասնախմբերի կազմում ընդգրկվում էին հայասիրական տրամադրություններ ունեցող եկեղեցական, հասարակական ու կուսակցական նշանավոր գործիչներ, գիտության և մշակույթի հայտնի դեմքեր, դիվանագետներ, անգամ՝ խորհրդարանների պատգամավորներ և այլք: Կոմիտեներն իրենց ներուժն օգտագործում էին Հայկական հարցի արդար լուծումը քարոզելու, հայասիրական տրամադրությունները մշտարթուն պահելու, եվրոպական կառավարող շրջանների հետ սերտ կապեր հաստատելու համար, իսկ անդամները մամուլում հանդես էին գալիս հայանպաստ հոդվածներով ու հարցազրույցներով, որտեղ աշխատում էին ներկայացնել Օսմանյան կայսրությունում արևմտահայության ծանր կացությունը, Հայկական հարցի պատմությունը և երբեմն առաջադրում էին խնդրի կարգավորման իրենց տարբերակը: Կոմիտեների ջանքերով հաճախ կազմակերպվում էին դասախոսություններ, զեկուցումներ և քննարկումներ, որոնց, որպես կանոն, ներկա էին լինում Հայ ազգային պատվիրակության անդամները: Այդ միջոցառումները կազմակերպվում էին զերազանցապես Պ. Նուբար փաշայի նախաձեռնությամբ ու հովանավորությամբ:

Ահա այդպիսի ներկայացուցչական համաժողովներից էր 1913 թ. ապրիլի 25-ին Լոնդոնի հայկական կոմիտեի ջանքերով կազմակերպված միջոցառումը, որը տեղի ունեցավ բրիտանական խորհրդարանում: Նրա աշխատանքներին մասնակցում էին պատգամավորներ, Լոնդոնի, Մանչեստրի, Փարիզի, Բեռլինի և Շվեյցարիայի հայկական կոմիտեների ներկայացուցիչներ: Համաժողովում Հայ ազգային պատվիրակության անունից հանդես եկավ Պ. Նուբար փաշան և Կ. Պոլսի Կեդրոնական վարժարանի նախկին տեսուչ Հարությունն Մոստիչյանը: Իր ելույթում Պ. Նուբարը ներկայացրեց պատվիրակության մշակած բարենորոգումների ծրագրի հոդվածները, որոնք հիմնված էին Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածի և տերությունների կողմից Բ. Դռանը 1895 թ. մայիսին ներկայացրած հուշագրի վրա: Համաժողովում ելույթ ունեցան նաև բրիտանական պառլամենտի պատգամավորներ Աննան Բրայան ու Թ. Բ. Օ'Քոնորը, Բեռլինի կոմիտեից դոկտոր Յոհաննես Լեփսիուսը, Փարիզի կոմիտեից՝ Ռոբեր դը Քենը, Շվեյցարիայից՝ Լեոպոլդ Ֆավրը և այլք[15]:

Պ. Նուբար փաշայի գործունեությունը թշնամանքով ընդունվեց երիտթուրքական կառավարության կողմից: Խեղաթյուրելով Հայ ազգային պատվիրակության նպատակների և ձեռնարկած քայլերի էությունը՝ երիտթուրքերը հայտարարում էին, թե Պ. Նուբար փաշան հայերի համար ցանկանում է բացառիկ արտոնություններ և առանձնաշնորհումներ ձեռք բերել: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ Պ. Նուբարն իր հրապարակային ելույթներում հաճախ ընդգծում էր՝ բարենորոգումները նույնքան անհրաժեշտ են մահմեդականներին, որքան քրիստոնյաներին, որ հայերն օսմանյան «հայրենիքը» մասնատելու ձգտումներ չունեն և այլն: 1913 թ. մայիսի 15-ին անգլիական "Times" *թերթի խմբագրապետին ուղղված նամակում ի թիվս այլ հարցերի Պ. Նուբարը պարզաբանում էր, որ պատվիրակությունը «ո՛չ բաժանում, ո՛չ անկախություն եւ ո՛չ այլ քաղաքական ինքնավարություն կը պահանջէ (ինչ որ ութոպիա մը պիտի ըլլար՝ նկատելով Հայաստանի աշխարհագրական պայմանները), մենք կը պահանջենք միմիայն Բեռլինի դաշնագրին 61-րդ յօդուածով խոստացած և 11 մայիսի 1895 ի յիշատակագրով Պոլսոյ օտար*

[15] *Տե՛ս Լիւտովիք տը Քոնթանսօն. 1913, 65–74:*

դեսպաններուն մատուցած ծրագրին պարունակած բարենորոգումներուն գործադրութիւնը»[16]:

1913 թ. հունիսի 1-ին Փարիզում Ֆրանսիայի Ասիական ընկերության նախաձեռնությամբ և Հայ ազգային պատվիրակության ջանքերով տեղի ունեցավ Եվրոպայի հայկական կոմիտեների երկրորդ խոշոր համաժողովը, որի աշխատանքները ղեկավարեց ընկերության հայկական բաժնի ղեկավար գեներալ Լակրուան: Իր ելույթում Պ. Նուբարը, հակիրճ շարադրելով Հայկական հարցի պատմությունը, հիմնավորում էր, որ բարենորոգումների պահանջն ունի միջազգային իրավական հիմքեր: Դրանց կիրառման գլխավոր պայմանը եվրոպական վերահսկողությունն է, առանց որի Թուրքական կառավարությունն անկարող է զսպել հայկական նահանգներում տեղի ունեցող գեղծումներն ու ոճիրները: Տերությունների միջոցով իրականացվող իրական ու ազդեցիկ վերահսկողությունը թույլ կտար «հսկել որպէս զի տեղական պաշտօնեաները, որոնք բարենորոգումները իրագործելու պաշտօն ունին, զանոնք ճշմարտապէս գործադրեն, առանց տկարումի, առանց կողմնակցութեան, առանց ի դերեւ հանելու օրէնքին գործադրութիւնը»[17]:

Փարիզի համաժողովը մեծ նշանակություն ունեցավ ֆրանսիական հասարակական-քաղաքական շրջանակներում հայկական պահանջների մասին անաչառ պատկերացում կազմելու գործում: Ավարտից անմիջապես հետո՝ հունիսի 5-ին, Պ. Նուբարն ընդարձակ նամակով դիմեց "L' homme Libre" *թերթի խմբագրապետին, որտեղ մանրամասնեց համաժողովում հնչեցրած իր տեսակետները*[18]:

Թեև ռուսական դիվանագիտությունը դեմ էր, որ Հայ ազգային պատվիրակությունը պաշտոնական դիմումներ ներկայացնի տերություններին, այդուհանդերձ, 1913 թ. ընթացքում Պ. Նուբարը տարբեր առիթներով մի քանի անգամ հանդես եկավ եվրոպական դիվանագիտական աշխարհին ուղղված պաշտոնական հուշագրերով: Դրանցում Հայ ազգային պատվիրակության նախագահը տնտեսական, սոցիալական, մարդասիրական ու քաղաքական շարժառիթներով հիմնավորում էր հայկական բարենորոգումների անհրաժեշտությունը, տերություններին հիշեցնում էր՝ հայկական բարենորոգումներն ամրագրված են Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածով, որ բարենորոգումների նկատմամբ անհրաժեշտ է սահմանել եվրոպական վերահսկողություն, և որ դրանց կիրառումը չի հանգեցնի Օսմանյան կայսրության մասնատմանը և այլն:

Հայկական հարցի նկատմամբ ռուսաց դիվանագիտության բարյացակամ դիրքորոշումը և Հայ ազգային պատվիրակության գործունեությունը հայ ժողովրդի տարբեր հատվածների մոտ հուսառատ ակնկալիքներ ծնեցին: Երկրագնդի ամենատարբեր մասերում բնակվող հայերը կազմում էին հայկական բարենորոգումների բազմազան ծրագրեր: Պ. Նուբարի առջև ծառացավ դժվարին խնդիր՝ ի մի բերել այդ առաջարկները և ստեղծել մեկ միասնական ծրագիր: Այլապես կստեղծվեր կարծիք, «թե հայերն իրանք եւս չգիտեն, թե ինչ են խնդրում կամ պահանջում»[19]: *Ուստի Հայ ազգային պատվիրակությունը, համակարգելով հայկական շրջանների առաջարկները, մշակեց բարենորոգումների միասնական ծրագիր, որն ամբողջովին հենվում էր 1878 թ.*

[16] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 34, թ. 31:*
[17] *Օտեան. 1913, 68:*
[18] *Տե՛ս Օտեան. 1913, 72–78:*
[19] *«Մշակ», 01. II. 1913:*

Բեռլինի վեհաժողովի և 1895 թ. Մայիսյան ծրագրի վրա: Պ. Նուբարն այն կարծիքին էր, որ բարենորոգումների չափավոր ծրագրի պահանջներն ավելի դյուրին կլինի երիտթուրքական կառավարությանն ընդունելի դարձնել, քանզի դրանք արդեն վավերացվել էին 1895 թ. հոկտեմբերի 20-ի սուլթանական հրովարտակով: Հայ ազգային պատվիրակության նախագիծը բաղկացած էր յոթ հոդվածից, որոնք նախատեսում էին. ա) հայկական վիլայեթների համար տերությունների համաձայնությամբ նշանակել եվրոպացի կոմիսար, բ) ստեղծել տերությունների կողմից կազմված մշտական հանձնաժողով, որը կվերահսկեր բարենորոգումների իրագործումը, գ) հիմնել հավասար թվով հայ և մահմեդական ներկայացուցիչներից կազմված նահանգային ընդհանուր ժողով, դ) կազմավորել տեղական ոստիկանություն, ե) իրագործել դատական և ֆինանսական բարենորոգումներ, զ) հատուկ վարչության միջոցով փոխհատուցել հողային բռնագրավումները, է) քրդական և թափառական այլ ցեղերի դեմ ձեռնարկել հակակշռող միջոցներ[20]:

Հայ ազգային պատվիրակության նախագիծը թեև չափավոր, բայց իրատեսական էր, քանզի դուրս չգալով թուրքական գործող օրենսդրության շրջանակներից՝ հենվում էր արդեն միջազգայնորեն ընդունված և սուլթանի կողմից վավերացված իրավական դրույթների վրա: Այսուհանդերձ Պ. Նուբարի նախագիծը չդարձավ միասնական և շրջանառության մեջ չդրվեց: Բանն այն է, որ Կ. Պոլսի ռուսաց դեսպան Միխայիլ Գիրսը պատրիարքարանին առաջարկեց իրեն ներկայացնել հայերի համար բարենորոգումների ընդունելի նախագիծ: Պատրիարքարանի հատուկ հանձնախումբը մշակեց բարենորոգումների նախագիծ, որն աչքի էր ընկնում իր պահանջների արմատականությամբ: Դրանում ամփոփված էին ավելի շատ արևմտահայության ցանկություններն ու երազանքները, քան թե այն, ինչ տվյալ պահին կարելի էր ձեռք բերել:

Պ. Նուբար փաշան իր անհամաձայնությունը հայտնեց նախագծի՝ երկու առանցքային հոդվածներին: Նախ՝ հայկական նահանգի ընդհանուր վերատեսուչը պետք է նշանակվեր ոչ թե եվրոպական երկրների, այլ Բ. Դռան կողմից՝ տերությունների համաձայնությամբ, և երկրորդ՝ վերահսկողության իրականացման ձևն անհրաժեշտ էր վերապահել եվրոպական երկրներին, այլ ոչ թե նրանցից ամենաշահագրգիռ պետությանը: Այս երկու հոդվածների շուրջ պատրիարքարանի և պատվիրակության միջև տարակարծությունն այն աստիճան սրվեց, որ Պ. Նուբարը սպառնաց, թե կհրաժարվի իր պաշտոնից. դիմեց կաթողիկոսին, որպեսզի վերջինս ստիպի պատրիարքարանին հրաժարվել վերահսկողությունը Ռուսաստանին հանձնելու առաջարկից[21]: Իր հերթին պատրիարքարանը դիմեց Կ. Պոլսի ռուսաց դեսպանին, որպեսզի վերջինս արտգործնախարարության միջոցով ազդի Պ. Նուբարի վրա[22]: Տարակարծությունները վերացնելու նպատակով՝ Փարիզ ժամանած պատրիարքարանի ներկայացուցիչ Վահան Փափազյանը (Կոմս) ձեռնունայն վերադարձավ:

1913 թ. ապրիլի 7-ին պատրիարքարանը, անտեսելով Պ. Նուբարի նկատառումները, իր կազմած նախագիծը հանձնեց Կ. Պոլսի ռուսական դեսպանությանը: Տեղեկանալով այդ մասին՝ ապրիլի 22-ին Պ. Նուբարը Գևորգ Հինգերորդին ներկայացրեց հրաժարականի դիմում: Հայ ազգային պատվի-

---

[20] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 34, թ. 23:*

[21] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 34, թ. 21:*

[22] *Տե՛ս* АВПРИ, ф. «Посольство в Константинополе», оп. 517/2, д. 3728, л. 46.

բակության դեկավարը համոզված էր, որ պատրիարքարանի գործելակերպը չափազանց վտանգավոր է, քանզի բանակցությունների հաջողության համար «երկու հաւատարիմ դլուխ եւ տնօրինութիւն, մին ի Պոլիս եւ միւսն Եւրոպա, անկարելի է»[23]:

Իրադարձությունների վտանգավոր ընթացքը կասեցվեց ռուսական դիվանագիտության ջանքերով: Ուսումնասիրելով պատրիարքարանի նախագիծը՝ ռուս դիվանագետները գտան, որ այն, ընդհանուր առմամբ, անընդունելի դրույթներ չի պարունակում: Միաժամանակ նրբանկատորեն հասկացրին՝ դժվար կլինի թուրքական կառավարությանն ընդունել տալ հատկապես այն պահանջները, որոնք դուրս էին թուրքական գործող օրենսդրության շրջանակներից: Դեսպան Մ. Ն. Գիրսը պատրիարքարանի ներկայացուցիչներ Գրիգոր Զոհրապին և Լևոն Տեմիրճիպաշյանին առաջարկեց փոխել եվրոպացի կոմիսարի նշանակման կարգը, իսկ վերահսկողության ձևը թողնել տերությունների հայեցողությանը[24]: Փաստորեն, ռուսաց դեսպանը նախագծի երկու հոդվածների վերաբերյալ առաջարկում էր ճիշտ այն տարբերակը, ինչն այդքան համառորեն պաշտպանում էր Պ. Նուբար փաշան: Կարճ ժամանակ անց փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունն էլ վերացավ, քանի որ ռուսական դեսպանության առաջին թարգման Ա. Մանդելշտամը, համադրելով հայկական նախագծերը, ստացավ Անտանտի երկրների համար ընդունելի տարբերակ:

Ռուսական նախագիծը շրջանառության մեջ դնելը նշանակում էր, որ հայկական բարենորոգումների հարցում «առաջին ջութակի դերը» պաշտոնապես ստանձնում է Ռուսական կայսրությունը, իսկ քննարկման կենտրոնը դառնում է Կ. Պոլիսը: Պ. Նուբար փաշային թվաց, թե ավարտվել է պատվիրակության առաքելությունը, ուստի դիմեց կաթողիկոսին՝ իր լիազորությունները դադարեցնելու խնդրանքով: Սակայն Գևորգ Հինդերորդը եզրակացրեց, որ նոր իրողությունները չեն փոխում Եվրոպայում պատվիրակություն ունենալու անհրաժեշտությունը, հետևաբար, պետք է պատրաստ լինել՝ սկսելու աշխատանքների նոր փուլ[25]: Եվ չսխալվեց:

Եոյակ դաշինքի ջանքերով 1913 թ. հունիսի 20–հուլիսի 11-ը Կ. Պոլսի ավստրո-հունգարական դեսպանատանը վեց տերությունների ներկայացուցիչների միջև հայկական բարենորոգումների խնդիրը քննարկելու համար հրավիրված համաժողովը ձախողվեց: Ռուսական դիվանագիտությունը նպատակահարմար գտավ վիճելի հարցերի շուրջ, մասնավորապես՝ մեկ միասնական հայկական նահանգ ստեղծելու, տերությունների համաձայնությամբ եվրոպացի նահանգապետ նշանակելու, բարենորոգումների նկատմամբ եվրոպական վերահսկողություն հաստատելու և այլն, ուղիղ բանակցություններ սկսել Գերմանիայի հետ: Ռուսական նոր մարտավարությունը ենթադրում էր քայլերի հետևյալ հերթականությունը. նախ՝ վիճելի հարցերի շուրջ համաձայնության գալ Գերմանիայի հետ, և երկրորդ՝ ռուս-գերմանական փոխզիջումային համաձայնությունը պարտադրել թուրքական կառավարությանը: Այս քայլերից յուրաքանչյուրն ուներ իր դժվարությունները, որոնց հաղթահարման համար Հայ ազգային պատվիրակությունը կարող էր ունենալ կարևոր դերակատարություն:

[23] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 34, թ. 10:
[24] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 34, թ. 3:
[25] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 34, թ. 6–9:

Պատրիարքարանի հուլիսի 18-ի խնդրագիր-դիմումի հիման վրա Պ. Նուբարն օգոստոսի սկզբներին մեկնեց Բեռլին: Հայկական բարենորոգումների շուրջ ռուս-գերմանական հակասությունները մեղմելու նպատակով նա հանդիպումների շարք սկսեց ինչպես պետական բարձրաստիճան պաշտոնյաների, այնպես էլ՝ հասարակական-քաղաքական շրջանների հեղինակավոր ներկայացուցիչների հետ և ծանրակշիռ ներդրում ունեցավ գերմանական հանրային կարծիքը հօգուտ հայկական բարենորոգումների տրամադրելու գործում: Այս առումով հատկապես կարևոր էր նշանավոր արևելագետ Յո. Լեփսիուսի հետ հանդիպումը, ով մեծ հեղինակություն ուներ Գերմանիայի գիտական, համալսարանական և արտաքին քաղաքականությունը տնօրինող անձանց շրջանակներում: Գերմանական ընդդիմադիր և անգամ կիսապաշտոնական թերթերում հայտնվեցին հայասիրական տրամադրություններ արտահայտող հոդվածներ, որոնց հեղինակները պնդում էին, թե իզուր է Գերմանիան հայերի բարեկամի դերը հանձնել այլ տերությունների, ու կառավարությանը կոչ էին անում դիմել վճռական գործողությունների՝ հայկական բարենորոգումներին աջակցելու համար[26]:

Բեռլինում պետքարտուղարի տեղակալ Արթուր Ցիմմերմանի հետ Պ. Նուբարի հանդիպումը ցույց տվեց, որ գերմանական դիվանագիտությունը չի վստահում ռուսական կողմի անկեղծությանը: Պ. Նուբարը ստիպված էր բազում հիմնավորումներ ներկայացնել, որ արևմտահայերը Օսմանյան կայսրությունը մասնատելու կամ Ռուսաստանին միանալու ձգտումներ չունեն, պարզապես ապահով ու խաղաղ կյանքի խնդիր ունեն: Նա փաստական ու իրավական հիմնավորումներով կարևորեց հատկապես եվրոպական վերահսկողության անհրաժեշտությունը: Հանդիպման ավարտական մասում Ա. Ցիմմերմանը հայտարարեց, որ ինքն ընդունում է հայաբնակ վիլայեթներում եվրոպական վերահսկողությամբ լուրջ բարենորոգումներ կատարելու անհրաժեշտությունը[27]: Օգոստոսի վերջին պետքարտուղար Գոթլիբ Ֆոն Յագովի հետ հանդիպումը վկայեց, որ Գերմանիան ոչ միայն կստարի հայկական բարենորոգումներին, այլև կողմնակից է դրանց նկատմամբ եվրոպական վերահսկողության հաստատմանը:

Պ. Նուբար փաշայի անցկացրած հանդիպումների շարքը որոշակի դեր խաղաց հայկական բարենորոգումների շուրջ ռուս-գերմանական համաձայնություն կայացնելու գործում: 1913 թ. սեպտեմբերի 10-ին Կ. Պոլսում Ռուսաստանի և Գերմանիայի դեսպաններ Մ. Գիրսը և Հ. Վանգենհայմը կայացրին փոխզիջումային համաձայնություն վեց կետից բաղկացած հայկական բարենորոգումների ծրագրի շուրջ, որը մի քանի օր անց ներկայացվեց թուրքական կառավարությանը: Վարչապետ Սայիդ Հալիմ փաշան հայտարարեց, որ իր կառավարությունը երբեք չի ընդունի բարենորոգումների նկատմամբ եվրոպական վերահսկողության պահանջը:

Հայկական բարենորոգումների նկատմամբ թուրքական կառավարության ժխտական դիրքորոշումը Հայ ազգային պատվիրակության գործունեությունում նոր փուլի սկիզբ դրեց: Անհրաժեշտ էր տերությունների միակամությամբ և ազդեցիկ լծակների կիրառմամբ բարենորոգումները պարտադրել թուրքական կառավարությանը: Պ. Նուբարը գտնում էր, որ այդպիսի ազդու լծակ կարող է լինել ֆինանսական ճնշումը: Բանն այն է, որ երիտթուրքական կառավարությունը իտալա-թուրքական և Բալկանյան պատե-

---

[26] *Տե՛ս «Բյուզանդիոն» (Կ. Պոլիս), 04. IX. 1913:*

[27] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 46, թ. 1–4:*

բազմների հետևանքով հայտնվել էր ֆինանսական ճգնաժամի մեջ ու նոր փոխառություններ ստանալու հույսով Եվրոպա էր գործուղել ֆինանսների նախարար Ջավիդ բեյին: Այդ պահին եվրոպական երկրներից՝ հիմնականում Ֆրանսիան, հնարավորություն ուներ ընդառաջել թուրքական կառավարությանը: Միաժամանակ երիտթուրքերը դիմել էին տերություններին՝ թույլատրելու Օսմանյան կայսրություն ներմուծվող ապրանքների վրա սահմանված մաքսային տուրքերը 4 % ավելացնելու խնդրանքով: Պ. Նուբարը գտնում էր, որ անհրաժեշտ է օգտվել բարեպատեհ առիթից և եվրոպական կառավարող շրջաններին համոզել՝ հրաժարվել Բ. Դռանը նոր փոխառություններ տրամադրելուց և 4 % մաքսային հավելումներին համաձայնություն տալուց, քանի դեռ չէր ընդունել հայկական բարենորոգումների ռուս-գերմանական համաձայնությունը:

Հոկտեմբերի 17-ին Փարիզում Պ. Նուբարի և Ռուսաստանի արտգործնախարար Ս. Սազոնովի, իսկ հոկտեմբերի 18-ին Ֆրանսիայի արտգործնախարար Ս. Պիշոնի հետ հանդիպումները ցույց տվեցին, որ երկու երկրները մաքսային հավելումների հարցում համաձայնության դիմաց արդեն ստացել են իրենց պահանջած փոխհատուցումները և Թուրքերին լրացուցիչ պահանջներ այլևս չեն կարող ներկայացնել: Ինչ վերաբերում է փոխառությանը, ապա Ս. Պիշոնը կարծում էր՝ Ֆրանսիան կարող է դիմել այդպիսի քայլի՝ պայմանով, որ մյուս տերությունները ևս մերժեն թուրքերի խնդրանքը[28]:

Ֆինանսական ճնշման հարցում գերմանական կառավարող շրջանների կարծիքը շոշափելու համար Պ. Նուբարը մեկնեց Բեռլին, ուր հանդիպեց Ա. Ցիմմերմանին: Պետքարտուղարի տեղակալը թեև հայտարարեց, որ արևմտահայությունն «այլևս չի կարող բավարարվել թուրքական դեղատոմսերով պատրաստված բարենորոգումների ծաղրանմանություններով», այնուամենայնիվ, գերմանական կառավարության դիրքորոշումը պայմանավորեց մյուս տերությունների կեցվածքով[29]:

Թուրքիային ֆինանսապես ճնշելու հարցում եվրոպական երկրների միջև ներդաշնակություն ստեղծելու նպատակով Հայ ազգային պատվիրակության նախաձեռնությամբ 1913 թ. նոյեմբերի 17-ին Փարիզում հրավիրվեց Եվրոպայի հայկական կոմիտեների համաժողով, որի աշխատանքներին մասնակցեցին Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ռուսաստանի, Ավստրո-Հունգարիայի, Իտալիայի ու Շվեյցարիայի նշանավոր հայասերներ, պառլամենտների պատգամավորներ, հասարակական-քաղաքական գործիչներ և այլք: Ի թիվս այլոց, համաժողովում ընդարձակ ճառով հանդես եկավ նաև Պ. Նուբար փաշան: Նրա առաջարկությունների հիման վրա միաձայն ընդունվեց բանաձև, որը յուրաքանչյուր պատվիրակ պետք է հանձներ իր կառավարությանը: Բանաձևը ցանկություն էր հայտնում, որպեսզի տերությունները համաձայնեն թուրքական կառավարությանը փոխառություն տրամադրելուն, եթե Բ. Դուռը պաշտոնապես ընդունի հայկական բարենորոգումների ռուս-գերմանական փոխզիջումային համաձայնությունը[30]:

Պ. Նուբարի ջանքերով Փարիզի համաժողովը համաեվրոպական հնչեղություն ստացավ, և ֆրանսիական կառավարությունը, նաև հաշվի առնելով դաշնակից Ռուսաստանի համառ պնդումները՝ հայկական բարենորոգումների ու գերմանացի գեներալ Լիման ֆոն Սանդերսի ռազմական առա-

[28] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 47, թ. 3–4:*

[29] *Տե՛ս* АВПРИ, ф. «Посольство в Константинополе», оп. 517/2, д. 3734, л. 304.

[30] *Բաբգէն վարդապետ. 1914, 31:*

քելության խնդիրները կապել փոխառություն տրամադրելու հարցի հետ, առժամանակ կասեցրեց Օսմանյան կայսրությանը վարկեր տրամադրելու գործընթացը: Դեկտեմբերի 12-ին, երբ դեսպաններ Մ. Գիրսը և Հ. Վանդենհայմը այցելեցին Բ. Դուռ, վարչապետ Սայիդ Հալիմ փաշան հայտարարեց, որ թուրքական կառավարությունն ընդունում է եվրոպացի վերատեսուչներ նշանակելու առաջարկը[31]*:*

Պ. Նուբար փաշան համոզված էր, որ ֆինանսական ճնշումը ժամանակավոր միջոցառում է, քանզի տերությունները խիստ շահագրգիռ էին Օսմանյան կայսրության ֆինանսական կայունությունում: Ուստի պատրիարքարանին, ինչպես նաև Փարիզ ժամանած դեսպան Մ. Գիրսին խորհուրդ տվեց երկրորդական խնդիրների վրա ավելորդ չծանրանալ և ռուս-գերմանական համաձայնության նախագծի մյուս կետերի շուրջ արագ համաձայնության գալ թուրքական կառավարության հետ[32]*: Եվ ահա, 1914 թ. հունվարի 26-ին Կ. Պոլսում ռուսական հավատարմատար Կ. Գուլկևիչը և Ս. Հալիմ փաշան ստորագրեցին համաձայնագիր հայկական բարենորոգումների վերաբերյալ, որի ստորագրումը ոչ միայն ռուսական դիվանագիտության, այլև Հայ ազգային պատվիրակության կարևոր ձեռքբերումն էր, քանի որ որոշակի երաշխիքներ էր տալիս արևմտահայության կյանքի, գույքի ու պատվի ապահովության համար:*

Ռուս-թուրքական համաձայնագրի ստորագրումից հետո Պ. Նուբարի ծրագրերում առաջին պլան մղվեցին Արևմտյան Հայաստանի տնտեսական զարգացման խնդիրները, որոնց լուծման ճանապարհային քարտեզում կարևորում էր երկրագործական բանկի հիմնումը: Օգտագործելով վերջինիս հնարավորությունները՝ նա նախատեսում էր ետգնել թուրքական բանկերում հայերի գրավադրած հողերն ու այլ գույքերը, հողազուրկ և սակավահող գյուղացիներին տրամադրել հող, սերմացու, անասուններ, աշխատանքային գործիքներ, ինչպես նաև արևմտահայ երիտասարդության համար հիմնել բարձրորակ կրթական համակարգ[33]*: Ընդլայնվելու էր նաև ՀԲԸՄ-ի գործունեության շրջանակները:*

Ցավոք, հայրենիքի վերաշինության Պ. Նուբարի ծրագրերին վիճակված չէր իրականություն դառնալ: 1914 թ. մայիսի 10-ին Կ. Պոլսում ընդհանուր վերատեսուչներ ընտրված Լուիս Վեստենենկը և Նիկոլա Հոֆֆը Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի հետ ստորագրեցին համաձայնագիր իրենց պարտականությունների և իրավունքների մասին: Համաձայնագիրը ոչ միայն կրճատեց ընդհանուր վերատեսուչների իրավասությունները, այլև վերջիններիս դարձրեց թուրքական կառավարությանը ենթակա շարքային չինովնիկներ: Ռուսական «Речь» *թերթը գրում էր՝ Բ. Դուռը թուրքական ազգային տարազով վերազգեստավորեց ռուս-թուրքական միջազգային համաձայնագիրը, որը դարձավ ընտանեկան համաձայնություն ներքին գործերի նախարարության և ընդհանուր վերատեսուչների միջև*[34]*: Թուրքական իրականությանը քաջածանոթ հայկական շրջանները հասկացան, որ բարենորոգումների գործը տապալման եզրին է: Պատրիարքարանը Պ. Նուբարին հեռագրեց շուտափույթ դիմել տերութ-*

---

[31] *Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923 թթ.). 1972, 307:*

[32] АВПРИ, ф. «Политархив 1914 г.», оп. 482, д. 3472, л. 40.

[33] *ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 216, թ. 5–10:*

[34] «Речь» (СПб.), 19. VI. 1914.

յուններին՝ մայիսի 10-ի համաձայնագրի հրահանգները վերանայելու խնդրանքով: Եվ նորից Հայ ազգային պատվիրակությունը դիմեց եվրոպական կառավարություններին՝ հայկական բարենորոգումների խնդիրը պաշտպանելու համար: Պ. Նուբարին հատկապես անհանգստացնում էր Լ. Վեստենենկի հետ հունիսի 6-ին Հաագայում տեղի ունեցած հանդիպումը: Վերջինս Պ. Նուբարին պատմեց, որ Թալեաթը համաձայնագրի ստորագրումից հետո պահանջել է մոռանալ հունվարի 26-ի համաձայնագիրը և առաջնորդվել միայն մայիսի 10-ի համաձայնագրի հրահանգներով: Պ. Նուբարի այն ակնարկին, թե ընդհանուր վերատեսուչները տերությունների ներկայացուցիչներ են, Վեստենենկը պատասխանեց, որ դրա համար այլևս ոչ հնարավորություններ կան, և ոչ էլ՝ իրավական հիմքեր: Ֆրանսիայի վարչապետ Գաստոն Դումերգին տեսակցելուց հետո՝ հունիսի սկզբներին, Պ. Նուբարը մեկնեց Բեռլին, ուր հանդիպեց Ա. Ցիմմերմանին: Ֆրանսիական և գերմանական կառավարող շրջաններն «անկեղծորեն» ցավակցեցին կատարվածի համար և խոստացան իրենց դեսպաններին հրահանգել, որպեսզի գլխավոր վերատեսուչներն առաջնորդվեն հունվարի 26-ի համաձայնագրով[35]:

Հունիսի 12-ին Պ. Նուբարը Բեռլինից մեկնեց Պետերբուրգ: Նա ռուսական կառավարությանը հանձնեց ընդհանուր վերատեսուչների իրավասություններին վերաբերող հատուկ հուշագիր, որտեղ վերլուծելով մայիսի 10-ի հրահանգներում երիտթուրքական կառավարության ինքնագլուխ մտցրած հոդվածները՝ ցույց էր տալիս, որ դրանք ոչ միայն խեղաթյուրում են ռուս-թուրքական համաձայնագրի իմաստը, այլև, առհասարակ, ձախողում են հայկական բարենորոգումների իրագործումը: Խոսելով ընդհանուր վերատեսուչներին պաշտոնազրկելու թուրքական կառավարության իրավունքի մասին՝ Պ. Նուբարը նկատում էր. «Տարակույս չկա, որ եթե պայմանագրութեան սույն հոդվածը մնա և կամ անոր ազդեցութիւնը չփոխվի, ... մեր բարենորոգումները ապահու և ստույգ ձախողված մը պիտի ըլլան»[36]: Արտգործնախարար Ս. Սազոնովի և արտգործնախարարության Մերձավոր Արևելքի բաժնի վարիչ իշխան Գրիգորի Տրուբեցկոյի հետ հանդիպումների ժամանակ Պ. Նուբարն առաջարկում էր հարկադրել երիտթուրքական կառավարությանը, որպեսզի վերջինս տերություններին դիմի հունվարի 26-ի համաձայնագրի ոգուն համապատասխան հուշագրով, ինչը կդառնար ընդհանուր վերատեսուչների գործունեության ուղեցույցը:

Ինչպես ֆրանսիական ու գերմանական, այնպես էլ ռուսական արտաքին քաղաքականությունը տնօրինող անձինք ընդունեցին Պ. Նուբարի առաջարկը: Իր հերթին, թուրքական կառավարությունը ևս չզլացավ ընդունել ընդհանուր վերատեսուչների իրավասություններին նվիրված հատուկ հուշագրով հանդես գալու ռուսական դիվանագիտության առաջարկը, սակայն զանազան պատրվակներով սկսեց ձգձգել, իսկ վերջին հաշվով՝ նաև խուսափել իրագործումից[37]:

Հայ ազգային պատվիրակությունն աշխարհամարտի տարիներին

1914 թ. օգոստոսի 1-ին սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը, և երիտթուրքական կառավարությունը, օգտվելով այդ առիթից, ոչ միայն տապալեց հայկական բարենորոգումների խնդիրը, այլև ձեռնամուխ եղավ

[35] Международные отношения в эпоху империализма. 1933, 370.

[36] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 58, թ. 65:*

[37] Международные отношения в эпоху империализма. 1933, 274.

Հայկական հարցի լուծման իր տարբերակի՝ ցեղասպանության իրականացմանը: Օսմանյան կայսրությունը պատերազմի մեջ մտավ 1914 թ. հոկտեմբերին: Այդ ժամանակ Պ. Նուբարը գտնվում էր Եգիպտոսում և առաջնահերթության կարգով կազմակերպեց դրամական խոշոր հանգանակություններ գաղթականների ու կամավորականների համար: 1915 թ. ապրիլի 28-ին նա ստացավ Ամենայն Հայոց կաթողիկոսի կոնդակը, որով լիազորվում էր մեկնել Եվրոպա՝ չեզոք երկրների օգնությամբ կանխելու հայկական կոտորածները, իսկ պատերազմից հետո օժանդակելու Անտանտի կողմից Հայաստանին ինքնավարություն շնորհելու գործընթացին[38]*: Ժամանելով Փարիզ՝ Պ. Նուբարը մայիս–հուլիս ամիսներին մի շարք հանդիպումներ ունեցավ Անգլիայի և Ֆրանսիայի պետական ու հասարակական-քաղաքական գործիչների հետ, անհրաժեշտ հուշագրեր ներկայացրեց Ֆրանսիայի արտգործնախարար Թ. Դելկասեին և Անգլիայի պետքարտուղարի տեղակալ Հ. Նիքոլսոնին՝ պատերազմի հաղթական ավարտից հետո Արևմտյան Հայաստանին ու Կիլիկիային ինքնավարություն շնորհելու մասին: Անգլո-ֆրանսիական կառավարող շրջանները հայ ժողովրդի տառապանքների և իղձերի նկատմամբ մեծագույն հարգանք ու համակրանք ցուցադրելով հանդերձ՝ Հայկական հարցի լուծումը հետաձգում էին մինչև պատերազմի հաղթական ավարտ՝ առանց այդ մասին որևէ գրավոր հավաստիացման կամ արձանագրման:*

1916 թ. ապրիլին Պ. Նուբարը տեղեկացավ, որ Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև կայացել է գաղտնի համաձայնություն, ըստ որի Վանի, Բիթլիսի, Էրզրումի ու Տրապիզոնի վիլայեթները պատերազմից հետո անցնելու են Ռուսաստանին, իսկ Դիարբեքիրի, Խարբերդի և Սեբաստիայի վիլայեթների մեծ մասը Կիլիկիայի հետ՝ Ֆրանսիային: Նրա համար ակնհայտ դարձավ, որ անհաղթահարելի խոչընդոտներ են ստեղծվում Մեծայալ Հայաստան երազն իրականացնելու ճանապարհին: Նա աստիճանաբար հակվեց Ֆրանսիայի հովանու ներքո ինքնավար Կիլիկիա ստեղծելու գաղափարին, ինչի համար դրական ազդակներ էին տալիս հենց Ֆրանսիայի պետական ու քաղաքական գործիչները: Ինքնավար Կիլիկիա հիմնելու գաղափարն իրականացնելու նպատակով էլ Պ. Նուբարն ակտիվորեն ներգրավվեց Ֆրանսիական կառավարության նախաձեռնությամբ Արևելյան (Հայկական) լեգեոնի կազմավորման աշխատանքներին: Պ. Նուբարը սկզբում կտրականապես դեմ էր հայկական առանձին զորամիավորում ստեղծելուն, քանի որ մտավախություն ուներ, թե երիտթուրքական կառավարությունը, պատրվակելով այդ իրողությունը, կարող էր վրեժխնդիր լինել հայազգի իր քաղաքացիներից: Ի պատասխան Ֆրանսիական կառավարության առաջարկի՝ նա Միջերկրական ծովի երրորդ էսկադրիլիայի հրամանատար փոխծովակալ Մորոյին զգուշացնում էր. «Մենք ցանկանում ենք ձեր հոգածությամբ ուսուցում ստացած բոլոր հայերին տեսնել ձեր դրոշների ներքո ծառայելիս, ցրված ձեր գնդերում, բայց ոչ մի դեպքում՝ առանձին հայկական ջոկատներ կազմավորելիս»[39]*: 1915 թ. օգոստոսի 16-ի օրենքը Ֆրանսիական հրամանատարությանն արգելում էր թշնամական երկրի քաղաքացիներին զինվորագրել Ֆրանսիական գործող բանակ, հետևաբար, հայ կամավորականները չէին կարող Ֆրանսիական բանակի մաս կազմել: Սակայն Ֆրանսիան մարդուժի խիստ կարիք ուներ, ուստի Ֆրանսիական բանակի գլխավոր հրամանատար, գեներալ*

---

[38] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 27, թ. 31:*

[39] *Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914–1918). 2005, 277:*

Ժոֆրը և ռազմական նախարար, գեներալ Ռոքը խիստ շահագրգիռ էին՝ «որքան հնարավոր է արագ, Կիպրոսում կազմավորել ֆրանսիական սպաներով համալրված հրամանատարական կազմ ունեցող և Սիրիայի ռազմածովային դիվիզիան գլխավորող դերծովակալի ենթակայության ներքո գտնվող՝ 5000 հայերից բաղկացած կորպուս»[40]: 1916 թ. հոկտեմբերի 24–27-ին Լոնդոնում տեղի ունեցան բանակցություններ՝ մի կողմից Պ. Նուբարի, մյուս կողմից՝ Ֆրանսիայի ներկայացուցիչ Ժորժ Պիկոյի և Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ Մարկ Սայքսի միջև: Պ. Նուբարին ընդունեց նաև Անգլիայի պետքարտուղար Էդուարդ Գրեյը: Այս բանակցությունների արդյունքում ձևավորվեցին այն հիմնական սկզբունքները, որոնց հիման վրա էլ սկսվեց հայ կամավորների մասնակցությամբ Արևելյան (Հայկական) լեգեոնի կազմավորումը[41]: Բանակցային այս ամբողջ գործընթացի ժամանակ Պ. Նուբարը պահանջում էր՝ անգլո-ֆրանսիական բարձրագույն ղեկավարությունը պաշտոնապես ու գրավոր հայտարարի, որ պատերազմից հետո հաշվի կառնվի հայ ժողովրդի ներդրումը ընդհանուր հաղթանակի գործում և Ֆրանսիային անցնող հայկական տարածքներին կշնորհվի ինքնավարության իրավունք: Սակայն Անտանտի ղեկավարությունը բարի կամեցողության բանավոր խոստումների սահմանը չանցավ:

1917 թ. գարնանը Պ. Նուբար փաշան վերադարձավ Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի միասնությամբ Ինքնավար և Միացյալ Հայաստան հիմնելու գաղափարին: Դրանում կարևոր դեր խաղացին աշխարհաքաղաքական երկու կարևոր իրադարձություններ: Նախ՝ մարտի 2-ին ռուսաց Նիկոլայ Երկրորդ ցարը գահազրկվեց և Ռուսաստանում հաստատվեցին ժողովրդավարական կարգեր, երկրորդ՝ ապրիլի 6-ին ԱՄՆ-ն պատերազմ հայտարարեց Գերմանիային: Պ. Նուբարը կարծում էր, որ եկել է պատմական նպաստավոր պահ, երբ կարելի էր պայքարել Անտանտի երկրներից մեկի հովանու ներքո Ինքնավար և Միացյալ Հայաստան ստեղծելու համար: Այս տեսակետն էլ նա շարադրեց մայիսի 24-ին Անտանտի երկրներին ուղղված «Հայկական հարցի և Հայաստանի ազատագրության վերաբերյալ» հուշագրում[42]: ԱՄՆ հովանու ներքո Միացյալ Հայաստան ստեղծելու տեսլականով էլ նա շարունակեց Անտանտի պետական ու քաղաքական ազդեցիկ գործիչների հետ իր հանդիպումները, պաշտոնական դիմումները, թերթերին տրվող հարցազրույցները և հասարակական կարծիքը հօգուտ միացյալ Հայաստանի գաղափարի տրամադրելու քարոզչական դժվարին աշխատանքները:

1917 թ. հայ հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցան կարևոր իրադարձություններ, որոնք վկայեցին հայ ժողովրդի երկու հատվածներում Պ. Նուբար փաշայի բարձր հեղինակության մասին: Նախ՝ մայիսին Երևանում՝ արևմտահայերը, այնուհետև սեպտեմբերին Թիֆլիսում արևելահայերը գումարեցին իրենց առաջին համագումարները, ուր քննարկվեցին համազգային նշանակության խնդիրներ: Ե՛վ արևմտահայ, և՛ արևելահայ համագումարներն ընդունեցին անհրաժեշտ բանաձևեր, որոնցով վստահություն էին հայտնում Պ. Նուբար փաշայի գլխավորությամբ գործող Հայ ազգային պատվիրակությանը:

---

[40] *Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914–1918). 2005, 318:*

[41] *Պ ո ղ ո ս ե ա ն. 2004, 103–124:*

[42] *Պ ո ղ ո ս ե ա ն. 2004, 127:*

1918 թ. հոկտեմբերի 30-ին կնքվեց Մուդրոսի զինադադարը, ինչը թեև հայության համար ուրախալի փաստ էր, սակայն Պ. Նուբարը խիստ դժգոհ մնաց զինադադարի՝ Հայաստանին առնչվող հոդվածներից: Մասնավորապես՝ նրա համար վրդովեցուցիչ էր, որ անգամ պարտությունն ընդունելուց հետո էլ թուրքական զորքերը շարունակելու էին մնալ հայկական վիլայեթներում: Տերություններին ուղղված դիմումներում, հուշագրերում ու մամուլին տրված հարցազրույցներում նա պահանջում էր հաղթանակած երկրների զինված ուժերով ռազմակալել հայկական վիլայեթները և Կիլիկիան, իսկ այնուհետև ձեռնամուխ լինել հայկական միասնական պետության ստեղծմանը: Սակայն պատերազմն արդեն ավարտվել էր, և ուխտադրուժ Անտանտը մեծ հաշվով արդեն հայերի օգնության կարիքը չուներ, ուստի Պ. Նուբարի կոչերն ու բողոքները մնացին ձայն բարբառո հանապատի:

Հայ ազգային պատվիրակությունը և Փարիզի խաղաղության վեհաժողովը

Պ. Նուբար փաշայի գործունեությունը նոր բովանդակություն ստացավ, երբ խաղաղության վեհաժողովին մասնակցելու համար 1919 թ. Փարիզ ժամանեց Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը՝ հայ հասարակական-քաղաքական գործիչ, գրող Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ: Տարակարծությունների հաղթահարումից հետո զույգ պատվիրակությունները ջանք ու եռանդ չխնայեցին հայ ժողովրդի արդար դատը պաշտպանելու համար: Պատվիրակությունները լիահույս էին, որ տերությունները, հաշվի առնելով հաղթանակի գործում հայ ժողովրդի ծանրակշիռ ներդրումը և կրած տառապանքները, վերջապես կստեղծեն Մեծ Հայաստանը: Այս վստահությամբ էլ փետրվարի 12-ին Ավ. Ահարոնյանն ու Պ. Նուբարը ստորագրեցին և Փարիզի վեհաժողովին ներկայացրին հայկական պահանջների մասին տեղեկագիր, որը ԱՄՆ քսանամյա մանդատի ներքո Արևմտյան Հայաստանի վեց և Տրապիզոնի վիլայեթներից, Կիլիկիայի չորս սանջակներից ու Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքից կազմված ծովից ծով Հայաստան ստեղծելու պահանջագիր էր[43]*:*

1919 թ. փետրվարի 6–13-ը Երևանում տեղի ունեցավ արևմտահայերի երկրորդ համագումարը, որը հայկական բոլոր երկրամասերը մեկ պետության մեջ միավորելու ձգտումով ընդունեց Ազատ և Միացյալ Հայաստանի անկախություն հայտարարելու մասին բանաձև: Հայության հատվածական բաժանումը վերացնելու նպատակով մայիսի 28-ին ՀՀ կառավարությունը հայտարարեց, որ «Հայաստանի խորհրդարանն ու կառավարությունը հանդիսանում են միացյալ Հայաստանի ազատ ժողովուրդը շաղկապող բարձրագույն օրենսդիր և գործադիր իշխանությունը»[44]*: Միացյալ Հայաստանի հռչակումը ենթադրում էր, որ ՀՀ և Հայ ազգային պատվիրակությունները պետք է միավորվեին՝ ունենալով մեկ նախագահ: Սակայն այդ տրամաբանությունը չգործեց, ինչը փոխադարձ անվստահության ու անմիաբանության պարարտ հող ստեղծեց զույգ պատվիրակությունների գործողություններում:*

1919 թ. փետրվարի 24-ից ապրիլի 22-ը Փարիզում Պ. Նուբար փաշայի նախաձեռնությամբ հրավիրվեց ազգային համագումար՝ համազգային կարևորության խնդիրներ քննարկելու և «մշակելու համար հայ ազգի պա-

---

[43] *Հայկական հարցը խաղաղության կոնֆերանսի առաջ. 1919, 6–9:*
[44] *Վ ր ա ց յ ա ն. 1993, 278:*

հանջներուն ծրագիրը»[45]: Համագումարը վավերացրեց Փարիզի վեհաժողովին ներկայացված փետրվարի 12-ի պահանջագիրը, Պ. Նուբարի գլխավորությամբ ընտրեց ազգային նոր պատվիրակություն, որը ՀՀ պատվիրակության հետ կազմելու էր միասնական պատվիրակություն:

Միացյալ Հայաստանի հռչակումից հետո Պ. Նուբարը պահանջում էր կազմել հավասար թվով արևմտահայերից ու արևելահայերից բաղկացած միացյալ խորհրդարան և միացյալ ժամանակավոր կառավարություն, որի վարչապետ կլիներ ինքը՝ մնալով պատվիրակության նախագահ: Այս հարցերի շուրջ բանակցություններ վարելու նպատակով Վ. Թեքեյանի գլխավորությամբ Երևան ժամանած առաքելությունը դրական արդյունքներ չգրանցեց: Ավ. Ահարոնյանը դժգոհում էր, որ Պ. Նուբարի հետ յուրաքանչյուր ընդհարումից հետո իր համար անասելի տանջանք էր նրա հետ «նորից տեսնվել, նորից ժողովներ անել, դիմումներ կատարել միասին»[46]: Անտանտի երկրների կողմից ՀՀ ճանաչումը և նրա հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը ենթադրում էր, որ հետայսու Խաղաղության վեհաժողովի կողմից ներկայացվող պաշտոնական փաստաթղթի տակ կարող էր դրվել միայն նրա լիազոր ներկայացուցչի ստորագրությունը: Պ. Նուբարը վախ ուներ, որ ՀՀ կործանման պարագայում Արևմտյան Հայաստանը լքված ու անտերության մատնված կլինի, ուստի ցանկանում էր Եվրոպայում իր դիրքերն ամրապնդել որպես Արևմտյան Հայաստանի ներկայացուցիչ:

Որքան էլ դժվարին լիներ համատեղ աշխատանքը, այդուհանդերձ, ազգային և հանրապետական պատվիրակությունները նշանակալի ներդրում ունեցան Փարիզի վեհաժողովին հայկական պահանջները ներկայացնելու գործում:

1920 թ. մայիսի 5-ից հուլիսի 13-ը Փարիզում տեղի ունեցավ ազգային երկրորդ համագումարը, որը քննարկեց Հայ ազգային պատվիրակության մեկամյա գործունեության հաշվետվությունը, պատվիրակության վերակազմության և այլ հարցեր: Համագումարն արձանագրեց, որ Հայ ազգային պատվիրակությունը ոչ միայն Փարիզի վեհաժողովի մասնակից պետություններին ներկայացրել է դիմումներ և հուշագրեր, վարել է բանակցություններ, այլև «աշխատանք է տարել հայ-պոնտական (հունական) հարաբերություններ հաստատելու, հայ-քրդական համաձայնություն կայացնելու և այլ հարցերի ուղղությամբ: Սան Ռեմոյի կոնֆերանսում բանակցություններ են վարվել Վրաստանի և Ադրբեջանի պատվիրակությունների հետ տարածքային և այլ հարցերի շուրջ»[47]: Պ. Նուբար փաշան դարձյալ ընտրվեց Հայ ազգային պատվիրակության նախագահ:

Սևրի պայմանագրին նախորդող բանակցային գործընթացի ժամանակ Պ. Նուբարը հանդիպեց և բանակցություններ վարեց Վերսալյան համակարգի գլխավոր ճարտարապետներ Ս. Պիշոնի, Ժ. Կլեմանսոյի, Ա. Միլերանի, Լ. Բուրժուայի, Վ. Վեսթերմանի, Վ. Վիլսոնի, լորդ Քերզոնի, Լլոյդ Ջորջի, Ռ. Սեսիլի և պաշտոնատար ու անպաշտոն բազմաթիվ այլ անձանց հետ: Այդ հանդիպումների ու բանակցությունների հիմնական հարցերը երկուսն էին. ա) ապագա Հայաստանի սահմանների ճշգրտումը և բ) հովանավոր

---

[45] *Համահայկական խորհրդակցություններ (1912–1920 թթ.), փաստաթղթերի և նյութերի ժողովածու. 2004, 6:*

[46] *Ա հ ա ր ո ն յ ա ն. 2001, 88:*

[47] *Համահայկական խորհրդակցություններ (1912–1920 թթ.), փաստաթղթերի և նյութերի ժողովածու. 2004, 7:*

պետության ընտրությունը: Ցավոք, նրա ներկայացրած ծրագրերն ու պահանջները քաղաքական ռոմանտիզմի և առավելապաշտության դրսևորումներ էին, ուստի անիրական էին:

1920 թ. օգոստոսի 10-ին փարիզամերձ Սևր ավանում Անտանտի ու Օսմանյան կայսրության միջև ստորագրվեց պայմանագիր, որը Հայաստանի տարածքը սահմանում էր Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներով, իսկ սահմանազատումը կատարվելու էր ԱՄՆ որոշմամբ: Հայաստանի կողմից պայմանագիրը ստորագրեց Ավ. Ահարոնյանը, և քանի որ Պ. Նուբարը ներկայացնում էր արևմտահայության շահերը՝ նրան ստորագրելու արտոնություն չտրվեց: Եթե Սևրի պայմանագիրը բավարարեր հայության բոլոր հատվածների պահանջները, ապա Հայ ազգային պատվիրակության գործունեությունն ավելորդ կդառնար: Սակայն պայմանագրում ոչինչ ասված չէր կիլիկիահայության մասին: Ուստի Պ. Նուբարը շարունակեց իր գործունեությունը՝ նպատակ ունենալով պաշտպանել Կիլիկիայում վերահաստատված հայերի իրավունքները: Ցավոք, այդ աշխատանքները որևէ իրական արդյունքներ չտվեցին, ինչը պայմանավորված էր առաջին հերթին Հայաստանի նկատմամբ քեմալական Թուրքիայի ռազմական հաղթանակներով, ինչպես նաև՝ Կիլիկիան Թուրքիային հանձնելու Ֆրանսիայի որոշմամբ: Պ. Նուբարի համար իսկական ողբերգություն էր թուրք-հայկական պատերազմում հայկական բանակի խայտառակ պարտությունը, քանզի այն ազգարարում էր մեծ երազի ավարտը: Դեռ 1919 թ. ամռանը, հիասթափված անգլո-ֆրանսիական դիվանագիտության կեղծ խոստումներից և Հայաստանի մանդատի հարցում ամերիկյան որոշման ձգձգումներից, նա վարչապետ Ալ. Խատիսյանին հորդորում էր մի կողմ դնել «կիրքերը եւ ամեն բան զոհելով կանոնաւոր եւ ուժեղ բանակ մը մէջտեղ բերել, փրկուած ենք, այլապես ես ուրիշ ապահով ելք չեմ գտներ»[48]: Գրող և հասարակական-քաղաքական գործիչ Ավետիս Թերզիպաշյանի վկայությամբ՝ Կարսի անկման լուրը Պ. Նուբարի դեմքին դալջեց «տժգունութեան և դալկութեան ... մռայլ դրոշմ մը»[49], իսկ «աչքերուն մէջ կար տխրութիւն, կար յուսաբեկութիւն, կար նաեւ և շատ շեշտուած զայրոյթ»[50]:

Հայաստանի Հանրապետության անկումից հետո զույգ պատվիրակությունները վերակազմավորվեցին որպես միացյալ պատվիրակություն, որի նախագահը թեև Ավ. Ահարոնյանն էր, բայց նիստերը նախագահում էր Պ. Նուբարը: 1921 թ. փետրվար–մարտ ամիսներին Լոնդոնի համաժողովում Հայկական հարցի ճախողումը նոր հիասթափություններ պատճառեց նրան: Համաժողովում Պ. Նուբարը ցավով ու տագնապով հայտարարեց. «Անհնար է պատկերացնել, որ մի պատերազմից հետո, որն այսքան շատ ժողովուրդների վերականգնեց իրենց երկրներում, հայերը, ովքեր սոսկալի տառապանքներ են կրել և ովքեր մարտնչել են դաշնակիցների կողքին այն միակ ժողովուրդն են լինելու, որի համար սեփական երկրում նույնիսկ մեկ անկյուն չի կարող վերապահվել»[51]:

Ամռանը Պ. Նուբարը դադարեցրեց իր մասնակցությունը Հայ ազգային պատվիրակության աշխատանքներին:

---

[48] *Թ է ր զ ի պ ա շ ե ա ն. 1939, 289:*

[49] *Թ է ր զ ի պ ա շ ե ա ն. 1939, 347:*

[50] *Թ է ր զ ի պ ա շ ե ա ն. 1939, 348:*

[51] *Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923 թթ.). 1972, 700:*

Մեծ բարեգործը

Հայ ազգային պատվիրակության նախագահի պաշտոնը լքելուց հետո էլ Պ. Նուբարը չդադարեցրեց ազգանպաստ գործունեությունը ՀԲՄ-ի շրջանակներում, հետևողականորեն շարունակեց բարեգործությունները: Գրող, հրապարակախոս, ՀԲՄ ընդհանուր քարտուղար Վահան Մալեզյանը, ով եղել էր նաև ազգային պատվիրակության ընդհանուր քարտուղարը, վկայում է. «Ինքզինքը այնուհետեւ տկար և յոգնած զգալով, մանաւանդ հայկական դատին համար թափուած ջանքերուն և ահագին զոհողութեանց ապարդիւն մնալէն խոցուած, քաշուեցաւ Ազգ. Պատուիրակութենէն, նախագահութիւնը յանձնելով Վսեմ. Գ. Նորատունկեանի, և այդ թուականէն ի վեր ամբողջովին նուիրուեցաւ Բարեգործականի զարգացման և զօրացման, հիմնական լուրջ կարգադրութիւններով և անձնական խոշոր նուիրատուութիւններով»[52]: Կյանքի վերջին տասնամյակում Պ. Նուբարը բարեգործական մեծաթիվ աշխատանքներ և նվիրատվություններ կատարեց. նրա ֆինանսական օժանդակությամբ 1920-ական թվականներին կառուցվեց Կահիրեի Նուբարյան վարժարանը, Փարիզի Նուբարյան մատենադարանը և Մարի Նուբարի անվան ուսանողական տունը: 1924 թ. նա Եգիպտոսից Բրյուսել տեղափոխեց հայ ուսանողական հիմնադրամը, որը կրթաթոշակով ապահովելու էր Եվրոպայում սովորող հայ երիտասարդներին՝ հատկապես նրանց, ովքեր կպարտավորվեին ուսումնառությունից հետո մեկնել Հայաստան:

Չնայած բոլշևիկյան վարդապետության հանդեպ ունեցած ժխտական վերաբերմունքին՝ Պ. Նուբարը ծանրակշիռ ներդրում ունեցավ աշխարհասփյուռ հայության հայրենադարձության և հայրենիքի վերաշինության գործերում: 1920-ական թվականներին նա անգնահատելի աջակցություն ցուցաբերեց սփյուռքահայերի ներգաղթի և Մերձավոր Արևելքի հայ որբերին Հայաստան տեղափոխելու դժվարին աշխատանքներին: Երևանի Ջրհեղեղի ու Լենինականի երկրաշարժի ժամանակ նա դարձյալ աղետյալների կողքին էր և ֆինանսական մեծ օգնություն տրամադրեց նրանց: Առողջապահության բնագավառում նրա ամենակարևոր ներդրումը 1929 թ. Մարի Նուբարի անվան ակնաբուժական կլինիկայի կառուցումն էր Երևանում: Ներգաղթյալների համար Երևանի հարևանությամբ բնակելի ավան կառուցելու գաղափարը Պ. Նուբարինն էր: Ավանը կառուցվեց անձնական և ՀԲՄ-ի ֆինանսական միջոցներով, բայց արդեն իր մահից հետո:

Պ. Նուբարի վրա ծանր էր անդրադարձել 1925 թ. տիկնոջ՝ Մարի Նուբարի մահը: Ա. Թերզիպաշյանը վկայում է, որ կնոջ մահով «Փաշայի մէջն ալ մեռաւ բան մը, բան մը որ կնոջը շունչովն էր միայն որ կ'ապրէր, անոր ներկայութեամբը, անոր ձայնովը, անոր անունովը: ... Մառին կարծես թէ յիշատակի համար բան մը խլած ըլլար ամուսնոյն էութիւնէն եւ հետը տարած: Անոր մահէն վերջ Փաշան այլ եւս առջի Փաշան չէր»[53]:

Պ. Նուբարը մահացավ 1930 թ. հունիսի 25-ին Փարիզում, թաղված է Պեր Լաշեզ գերեզմանատանը:

---

[52] *Նուպար և Նուպարաշէն. 1929, 12: Թեև գրքի վրա բացակայում է հեղինակի անուն-ազգանունը, սակայն Վ. Մալեզյանը «Ճամբուս ծայրը» Ա հատորի էջ 290-ում փաստում է, որ «Նուպար և Նուպարաշէն» աշխատության հեղինակն ինքն է:*

[53] *Թ է ր զ ի պ ա շ ե ա ն. 1939, 366:*

Եզրակացություն

Պողոս Նուբարի կյանքը պայմանականորեն կարելի է բաժանել երեք փուլերի: Առաջինը նրա աշխատանքային շրջանն էր, երբ կայացավ որպես պետական պաշտոնյա, ձեռներեց, ազգային գործիչ և բարերար: Այս փուլում նրա կարևորագույն ներդրումը ՀԲԸՄ-ի ստեղծումն էր, ինչի կայացումը Պ. Նուբարի անուրանալի ծառայությունն էր հայ ժողովրդի առջև: Թե՛ ձեռնարկատիրական, թե՛ ազգային և թե՛ բարեգործության ասպարեզներում նա իրեն դրսևորեց որպես գերազանց կազմակերպիչ և հայրենանվեր գործիչ:

Երկրորդ փուլը սկսվում է 1912 թ., երբ նշանակվեց Հայ ազգային պատվիրակության նախագահ և անձնվիրաբար ծառայեց Հայկական հարցի լուծմանը: Նրա դիվանագիտական ջանքերը ծանրակշիռ էին հատկապես Եվրոպայի հասարակական կարծիքը հօգուտ Հայկական հարցի տրամադրելու, ինչպես նաև հայկական բարենորոգումների շուրջ ռուս-գերմանական և ռուս-թուրքական համաձայնություն կայացնելու գործում: 1912–1921 թթ. նա ղեկավարեց Հայ ազգային պատվիրակությունը և հայ ժողովրդի համար այդ ողբերգական ժամանակահատվածում ոչ միայն շարունակեց զբաղվել բարեգործությամբ, այլ նաև միայնակ կրեց դիվանագիտական աշխատանքի ամբողջ ծանրությունը: Պատվիրակության անդամները տարբեր հանգամանքների բերումով և պատճառաբանություններով մի քանի անգամ լրացվեցին ու փոփոխվեցին, սակայն, միևնույն է, նա մինչև վերջ կրեց դժվարություններն ու պատասխանատվությունը: Որքան էլ խաբված ու հիասթափված լիներ օտարերկրյա կառավարող շրջանների խոստումներից, միևնույն է անտրտունջ և անմնացորդ նվիրումով պաշտպանեց իր ժողովրդի շահերը: Զուտ նենալով իշխանավարության ազդու լծակներ կամ գործընթացների վրա ազդելու իրական որևէ հնարավորություն՝ նա պատվով կատարեց Ամենայն Հայոց կաթողիկոսի և ՀՀ կառավարության հրահանգներն ու ցուցումները: Նրա կենսագիրներից Հակոբ Ալթունյանը նկատել է. «Ան (Պողոս Նուբարը – Մ. Մ.) պայծառորեն կը տեսնէր թէ Մեծ Պետութիւններու շահերը լողքարի մը նման պիտի ճզմէին փոքրազգերու իրաւունքները: Սակայն իր բոլոր կարողութիւններովը, իր հոգեկան վերջին ուժերովը, ան կը պայքարէր փրկելու համար գէթ նուազագոյնը իր ժողովուրդին համար: Ուրիշ ի՞նչ զենք կրնար գործածել, երբ ետին չունէր բանակ ու թնդանօթ, այլ ցիրուցան, գաղթական ու խեղճացած ժողովուրդ մը»[54]:

Կյանքի երրորդ փուլում արդեն յոթանասունամյա գործիչը գերազանցապես զբաղվեց բարեգործությամբ: Անգամ անկողնուն գամված՝ հետևում էր աշխարհասփյուռ հայության և Հայաստանի կարիքավորներին ու աղետյալներին օգնելու իր ծրագրերի ճշգրիտ իրականացմանը:

Պողոս Նուբար փաշան հայոց պատմության մեջ մնաց որպես ազգային մեծ գործիչ և բարերար:

Միքայել Մարտիրոսյան – պ. գ. թ., դոցենտ, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս: Գիտական հետաքրքրությունները՝ հայ-ռուսական առնչություններ, Հայկական հարցի պատմություն: Հեղինակ է ուսումնամեթոդական ձեռնարկի և շուրջ 30 հոդվածի: martirosyanmiqael02@gmail.com

[54] *Ալթունեան. 2012, 162:*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ալթունեան Յ. 2012, Կենսագրութիւն Նուպար փաշայի եւ Պօղոս Նուպար փաշայի, Թորոնթօ, 169 էջ:

Ահարոնյան Ավ. 2001, Սարդարապատից մինչև Սևր և Լոզան, Երևան, Երևանի համալս. հրատ., 252 էջ:

«Անահիտ» (Փարիզ), 1930, թիվ 2, մայիս-հունիս:

Բաբգէն վարդապետ. 1914, Հայկական հարցը և Պօղոս Նուբար փաշան, Վաղարշապատ, տպ. ս. Էջմիածին, 32 էջ:

«Բյուզանդիոն» (Կ. Պոլիս), 04. IX. 1913:

Բոյաջյան Հ. 2010, Պողոս Նուբար փաշան և բարենորոգումների խնդիրն Արևմտյան Հայաստանում 1912–1914 թթ., Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 208 էջ:

Թէրզիպաշեան Ա. 1939, Նուպար, Փարիզ, 384 էջ:

Լիւտօվիք տը Քօնթանսօն. 1913, Հայկական հարցին վերջին փուլերը, Կ. Պոլիս, տպագր. Օսմ. Գործակից ընկ., 78 էջ:

Համահայկական խորհրդակցություններ (1912–1920 թթ.), փաստաթղթերի և նյութերի ժողովածու. 2004, Երևան, «Գրիգ տպագրատուն», 787 էջ:

Հայկական հարցը խաղաղության կոնֆերանսի առաջ. 1919, Բոստոն, Hairenik Press, 32 էջ:

Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923 թթ.). 1972, պրոֆ. Ձ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, Հայաստան հրատ., 810 էջ:

Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 57, g. 5, գ. 26, ֆ. 57, g. 5, գ. 27:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ձեռագրատուն, վավ. 288:

Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914–1918). 2005, հ. 1, աշխատ. Արթուր Պեյլերյանի, Երևան, «Հայաստան», 484 էջ:

Մ. Մաշտոցի անվան մատենադարան, Կաթ. դիվան, g. 20, թղթ. 238, վավ. 164:

«Մշակ» (Թիֆլիս), 04. I. 1913, 01. II. 1913:

Նուպար և Նուպարաշէն. 1929, Փարիզ, տպարան Մասիս, 47 էջ:

ՊԲՀ, 1993, № 1–2:

Պօղոսեան Ս. 2004, Պողոս Նուբար փաշա. ազգային գործիչը, Երևան, «Զանգակ–97», 264 էջ:

Չորմիրսեան Լ. 1975, Համապատկեր արևմտահայոց մէկ դարու պատմութեան, հ. Գ., տպ. Սևան, 750 էջ:

Վրացյան Ս. 1993, Հայաստանի Հանրապետություն, Երևան, «Հայաստան», 704 էջ:

«Տարազ» (Թիֆլիս), 1913, հունվար, թ. 1:

Օտեան Ե. 1913, Պօղոս փաշա Նուպար (կենսագրական նոթեր), Կ. Պոլիս, Եփրատ գործակալութիւն, 100 էջ:

Архив внешней политики Российской империи, ф. «Посольство в Константинополе», оп. 517/2, д. 3727, л. 22; д. 3728, л. 46; д. 3734, л. 304.

Международные отношения в эпоху империализма, серия III, т. III. М.–Л., Государственное социально-экономическое издательство, 1933, 467 с.

«Речь» (СПб.), 19. VI. 1914.

ВЕЛИКИЙ НАЦИОНАЛЬНЫЙ ДЕЯТЕЛЬ И ФИЛАНТРОП: ПОГОС НУБАР-ПАША

МИКАЕЛ МАРТИРОСЯН

Резюме

Ключевые слова: Погос Нубар-паша, Геворг Пятый, патриархат Константинополя, Армянская национальная делегация, армянские реформы, русско-турецкое соглашение, Севрский договор, ВАБС, великий филантроп, национальный деятель, Мари Нубар.

Среди армянских национальных, общественных и политических деятелей начала XX века своей патриотической деятельностью выделяется Погос Нубар-паша. Он родился в 1851 г. в Константинополе. Будучи сыном премьер-министра Египта Нубара-паши, он получил европейское образование и начал свою карьеру во Франции, позже продолжил трудовую деятельность в Египте. Погос Нубар-паша сыграл значительную роль в национальной жизни армян Египта. Он был основателем и пожизненным почетным президентом Всеобщего армянского благотворительного союза. В 1912 г. католикос всех армян Геворг Пятый назначил его главой Армянской национальной делегации в Европе. Вплоть до 1921 года он боролся за справедливое решение Армянского вопроса. С его помощью французскому правительству удалось создать Восточный (Армянский) легион. После Первой мировой войны Погоса Нубар вел переговоры практически со всеми архитекторами Версальской системы и обосновал требования армян.

Погос Нубар-паша известен также как великий филантроп. Он потратил свои финансовые средства на спасение от голода беженцев и сирот, уцелевших от Геноцида. Организовал не только репатриацию армян Ближнего Востока и Греции, но и образование молодежи. На средства Погоса Нубара в Ереване построена офтальмологическая клиника им. Мари Нубар и жилой квартал Нубарашен. Погос Нубар-паша скончался в 1930 г. и был похоронен на кладбище Пер Лашез в Париже.

Микаел Мартиросян – к. и. н., доцент, преподаватель кафедры всемирной истории и методики ее преподавания АГПУ им. Х. Абовяна. Научные интересы: армяно-русские связи, история Армянского вопроса. Автор учебно-методического пособия и около 30 статей.
martirosyanmiqael02@gmail.com

GREAT NATIONAL FIGURE AND PHILANTHROPIST: POGHOS NUBAR PASHA

MIKAEL MARTIROSYAN

S u m m a r y

Key words: Poghos Nubar Pasha, Gevorg the Fifth, Patriarchate of Constantinople, Armenian National Delegation, Armenian reforms, Russian-Turkish agreement, Treaty of Sevres, AGBU, great philanthropist, national figure, Marie Nubar.

Among the Armenian national, public and political figures of the early 20th century, Poghos Nubar Pasha stands out with his patriotic activities. He was born in 1851 in Constantinople. As the son of Egyptian Prime Minister Nubar Pasha, he received a European education and began his career in France, later continuing his labour activities in Egypt. Poghos Nubar Pasha played a significant role in the national life of the Armenians of Egypt. He was the founder and lifetime honorary president of the General Armenian Benevolent Union. In 1912, the Catholicos of all Armenians, Gevorg the Fifth, appointed him head of the Armenian National Delegation in Europe. Until 1921, he fought for a fair solution to the Armenian Question. With his support, the French government managed to create the Eastern (Armenian) Legion. After the First World War, Poghos Nubar conducted negotiations with almost all the architects of the Versailles system and substantiated the demands of the Armenians.

Poghos Nubar Pasha is also known as a great philanthropist. He spent his financial resources to save from starvation the refugees and orphans who survived the Genocide. He organized not only the repatriation of Armenians from the Middle East and Greece, but also the education of young people. At the expense of Poghos Nubar, an ophthalmological clinic named after A. Marie Nubar and Nubarashen residential quarter were built. Poghos Nubar Pasha died in 1930 and was buried in the Père Lachaise cemetery in Paris.

Mikael Martirosyan – Candidate of Sciences in History, Associate Professor, Lecturer at the Chair of World History and its Teaching Methods of the ASPU after Kh. Abovyan. Scientific interests: Armenian-Russian relations, history of the Armenian Question. Author of educational-methodical manuals and about 30 articles. martirosyanmiqael02@gmail.com

Պատմաբանասիրական հանդես 2022 № 1 Историко-филологический журнал